

Gurgen Khanjyan

Գորգեն Խանջյան

Stróż
rozwalonego
domu

Կիսավեր տան պահակը



Stróż
rozwalonego
domu

Կիսավեր տան
պահակը

Gdańsk
2023

Կիսավեր տան պահակը

Copyright © by Gurgen Khanjyan

Copyright © for Polish translation by Aleksandra Majdzińska
i Vahram Mkhitarian

Copyright © for Polish edition by Fundacja Mlecznego Brata,
Gdańsk 2023

Zrealizowano dzięki dotacji Ministra Spraw Wewnętrznych
i Administracji



Ministerstwo
Spraw Wewnętrznych
i Administracji

Wydanie I

ISBN

epub 978-83-7528-348-8

mobi 978-83-7528-349-5

pdf 978-83-7528-350-1

Projekt okładki: Zuzanna Nowak

Koncepcja okładki: Vahram Mkhitarian

Skład i łamanie: Zuzanna Nowak

Redakcja i korekta: Anna Piwowarczyk

Redaktor naczelny: Fabian Cieślak

E-book wydano we współpracy

z Wydawnictwem Marpress sp. z o.o.,

ul. Targ Rybny 10B, 80-838 Gdańsk, www.marpress.pl

Wydawca:

Fundacja Mlecznego Brata

Stara Dąbrowa 40

76-231 Damnica

Gurgen Khanjyan

Stróż
rozwalonego
domu

Գուրգեն Խանջյան
Կիսավեր տան
պահակը

tłumaczenie: Aleksandra Majdzińska,
Vahram Mkhitaryan

Wydanie niniejszego opowiadania jest realizacją pomysłu na serię wydawniczą prezentującą współczesną literaturę ormiańską.

Pomimo, iż upłynęło już ponad trzydzieści lat od rozpadu Związku Radzieckiego, literatura niezależnej Armenii wciąż jest tłumaczona z przekładu rosyjskiego, dlatego bardzo zależy nam, aby zaproponować Czytelnikowi bezpośrednio tłumaczenie z pierwowzoru.

Chciliśmy, by to jedno opowiadanie stało się powodem powstania jednej książeczki, wierząc, że krótka forma literacka może funkcjonować samowystarczalnie jako osobne i niemalże wielkie dzieło.

Mając na uwadze źródła naszych literackich inspiracji do filmu krótkometrażowego „Mleczny brat”, chcemy, by to wydawnictwo było pewnego rodzaju długiem wdzięczności, który, mamy nadzieję, stanie się dobrą kontynuacją zapoczątkowanej małej „wielkiej” serii, która pobudzi ciekawość Czytelnika i sprawi, że sięgnie On po współczesną literaturę ormiańską, a sama seria być może przyczyni się do powstania nowych scenariuszy i ekranizacji filmów.

„Stróż rozwalonego domu” Gurgena Khanjyana, to już trzecie opowiadanie – książeczka z serii „Od słowa do obrazu”, po „Oceanie” Arama Pachyana i „Bracie baranku” Vano Siradeghyana.

Mamy również nadzieję, że dwujęzyczność wydania będzie dodatkowym atutem, który da możliwość ubogacenia się odmiennością kulturową przy jednoczesnym zachowaniu własnej.

Aleksandra Majdzińska
Vahram Mkhitarian

Սույն պատմվածքի հրատարակությունը շարունակությունն է գրական շարքի տպագրության մեր մտահաղացման, որ ներկայացնում է հայ ժամանակակից գրականությունը:

Չնայած նրան, որ Խորհրդային Միության փլուզումից հետո անցել է արդեն ավելի քան երեսուն տարի՝ անկախ Հայաստանի գրականությունը դարձյալ թարգմանվում է ռուսերեն լեզվից, այդ իսկ պատճառով մեզ համար կարևոր է առաջարկել լեհ ընթերցողին անմիջականորեն թարգմանությունը հայերեն բնօրինակից:

Ցանկություն կար, որպեսզի մեկ արձակ գործն առիթ հանդիսանար մեկ գրքի հրատարակման՝ հավատալով նրան, որ փոքր ծավալի գործը կարող է հանդիսանալ ոչ միայն առանձին լիարժեք՝ այլ նաեւ մեծ ստեղծագործություն:

Հիշելով՝ «Կաթնեղբայր» ֆիլմի մեր գրական ոգեշնչման աղբյուրի մասին, ցանկանում ենք, որ այս հրատարակությունը յուրատեսակ երախտագիտության մեր արտահայտությունը լինի, որը հույս ունենք շարունակությունը կհանդիսանա փոքր՝ ՄԵԾ գրական շարքի եւ կխթանի ընթերցողի հետաքրքրությունը դեպի հայ ժամանակակից գրականությունը, իսկ բուն շարքը մի գուցե կնսպաստի նոր սցենարների եւ կինո բեմադրությունների ստեղծմանը:

Գուրգեն Խանջյանի «Կիսավեր տան պահակը» արդեն երրորդ պատմվածքն է մեր «Խոսքից՝ պատկեր» գիրք պատմաշարից, Արամ Պաչյանի «Օվկիանոսի» եւ Վանո Սիրադեղյանի «Գառ ախպերիկ»-ից հետո:

Հույս ունենք նաեւ, որ երկլեզու հրատարակությունը յուրովի լրացուցիչ առժեք կհանդիսանա, հնարավորություն տալով ընթերցողին հարստանալու մշակութային բազմազանությամբ, միաժամանակ պահպանելով՝ սեփականը:

Ալեքսանդրա Մայջինսկա
Վահրամ Մխիթարյան

Więc stoję tu, w tym... ale po co się spieszyć, chociaż przyznam, sam trochę się niecierpliwie, jednak wydarzenie warte jest tego, aby opowiedzieć je od początku do końca ze szczegółami.

Każdego ranka za toaletę służy mi salon w opuszczonym, rozwalającym się domu. Zupełnie przypadkowo odkryłem ten zrujnowany dom, ogrodzony wielkimi betonowymi płytami, spodobał mi się i od tego czasu odwiedzam go codziennie. W ogóle szybko nabieram nawyków, staję się ich niewolnikiem, taki już mam charakter. Jeśli, powiedzmy, dwa dni z rzędu co rano piję wino w tej samej kawiarni, to trzeciego dnia nogi same mnie tam niosą. Wprawdzie przykład może i typowy, ale nieaktualny, bo od dawna już nie piję wina w kawiarni — tam jest drożej, wybaczcie... No ale nie zbaczajmy z tematu, bo możemy zejść w dzikie ostępy: moje myśli są nieokiełznane i trudno je poskromić, jeśli puścić je wolno, to potrafią momentalnie ponieść w siną dal, z której ciężko wrócić. Mało tego, ta sina dal jest bardzo bolesna — mam wrażenie, że moje myśli ciągną mnie nago przez ciernie. I znowu zbaczam z tematu; za każdym razem mówiąc o konkretnym przypadku, nie można, nie sposób jednocześnie dotykać ogółu, choć nie jest to może i pozbawione sensu. No ale czy można bez końca się torturować w imię sensu! I dlatego opowiem o ostatnich wydarzeniach, które stały się zapewne dla mnie punktem zwrotnym, zważywszy, że stoję teraz tutaj, w tym... Znowu wybiegam w przód... Słuchaj, czy naprawdę nie możesz się powstrzymać? Co to za samowolka!

A więc było to kilka dni temu, dokładnie cztery dni temu; obudziłem się wcześniej rano, brzuch coś mnie poboлеwał, wzdęło mnie — brak zębów zwykle

powoduje nadmierne gromadzenie się gazów, oczywiście jeśli uda się coś zjeść. Obudziłem się, wyczołgałem z krzaków, zmuszony przepychać się między ciałami moich towarzyszy – właśnie tak, między ciałami. Po nocnej popijawie śpią na kupie wyłącznie ciała; możesz je besztać, możesz opróżnić im kieszenie – i tak będą spać jak zabici. Za dużo powiedziane: „opróżniać kieszenie”, bo ich kieszenie – o ile te podarte łachmany w ogóle mają jeszcze jakieś kieszenie – poza nielicznymi wyjątkami i tak są już puste, zwłaszcza rano. Ja na przykład używam tylko jednej kieszeni marynarki, dolnej, po lewej stronie, co świadczy o tym, że poprzedni właściciel marynarki był leworęczny. Ciekawe, co słyhać u tego dobrego człowieka. Co porabia, żyje czy nie żyje? To oczywiście niefortunne, ale większość marynarek żyje dłużej niż ich właściciele... Wyczołgałem się więc, posprawdzałem rozrzucone wokół butelki – niestety, były puste – znalazłem w trawie niedopałek papierosa, wetknąłem do ust i wyszedłem na ulicę. Mógłbym zapalić od razu, ale lubię palić w pokoju, kucając, że tak powiem, w trakcie czynności. Dopiero kiedy doszedłem do ogrodzenia, poprosiłem jakiegoś przechodnia o ogień. Zerkając na zgnieciony niedopałek, wyjął z kieszeni całą paczkę, jednak nie poczęstował mnie, sam wyciągnął papierosa i podał mi go, pstrykając przy tym zapalniczką. Tak, wiem, mam brudne ręce, ale ludzie zwykle myją ręce po wyjściu z toalety, prawda?

Kucnąłem i zaciągnąłem się papierosem. Cierpiąłem na zaparcia – to konsekwencja picia czerwonego wina.

Nie lubię czerwonego wina, jednak nic nie poradzę, że nie zawsze można mieć swój ulubiony napój. Uwielbiam za to wódkę morelową, ale to inna historia... Usadowiłem się więc, paliłem i myślałem o życiu, o człowieczeństwie. Myślałem o tym, jak niepostrzeżenie człowiek zaczyna staczać się w przepaść. Wystarczy nawet coś przegapić, najmniejsze poślizgnięcie — i zaczyna się upadek, na pozór może jeszcze niezauważalny, ale nitka już się rozwija, kłębek już się toczy. A jeśli upadłeś, to niewiarygodnie trudno jest znów stanąć na nogi. Tak sobie myślałem; w ogóle lubię myśleć, to pewnie moje ulubione zajęcie. Czasem, jak wpadnie trochę pieniędzy, biorę coś mocniejszego i papierosy i schodzę do wąwozu, siadam samotnie pod drzewem, sączę alkohol, palę i myślę. Kiedy wracam na nasz skwerek, to patrzą na mnie tak podejrzliwie, jakbym nie miał prawa do odrobiny prywatności. Skandaliczne! Ale wróćmy do wydarzeń tamtego dnia. Skończyłem swoje sprawy i już miałem podciągnąć spodnie, gdy nagle pojawił się on. Poprawił mundur, ujął w dłoń gumową pałkę wiszącą u jego pasa i ze zdecydowaną miną stanął w drzwiach. Wyglądało na to, że mnie nie zauważył, nawet nie patrzył w moją stronę. Zastygłem w półprzysiadzie, a potem, opamiętawszy się, podciągnąłem spodnie. Od razu mi się nie spodobał, stwierdziłem, że lepiej z nim nie zadzierać, i po cichu skierowałem się w stronę drzwi z zamiarem wyjścia.

— Wróć, szybko! Hej, do ciebie mówię! — rozkazał i pogroził mi pałką.

Na wszelki wypadek cofnąłem się.

— Dlaczego? — zapytałem.

— Tutaj jest posterunek i jestem tu na warcie — odpowiedział z dumą.

— Panu chyba coś się pomyliło — odparłem. — To jest na w pół rozwalony, dawno opuszczony dom, jaki tu może być posterunek?

— Nie jestem upoważniony do udzielania wyjaśnień — warknął. — Powiedziałem „posterunek” i tyle. I nie dyskutować!

— Tak jest — zgodziłem się. — A teraz proszę pozwolić mi opuścić powierzone panu terytorium.

— W żadnym wypadku! Mam nakaz, aby nikogo nie wpuszczać i nie wypuszczać.

— Jasne, że nie wpuszczać, ale nie nie wypuszczać... — nalegałem.

Był jednak nieugięty:

— Nic o tym nie wiem, więc nie wpuszczam i nie wypuszczam. Wykonuję rozkazy, jasne?

— Rozumiem. — Nie było sensu dłużej nalegać. — A jak długo mam tu zostać?

— Dopóki nie skończy się moja zmiana — odparł sucho.

— Przepraszam, ale jak długo ona trwa, jeśli oczywiście to nie tajemnica?

— Tak długo, jak trzeba — powiedział, po czym liściowicie dodał: — Osiem godzin. I nie próbuj mnie przekonywać ani przekupywać, bo ukarzę. I nie gadać mi tu.

No to mam problem — pomyślałem. — Bóg wie, ile głodny muszę tkwić z tym wariatem... Moi towarzysze pewnie się już obudzili i ruszyli w miasto w poszukiwaniu zarobku i przeczesują najbliższe ulice, a ci dwaj, którzy mają trudności z chodzeniem (jeden ma obolałe stawy, drugi krwawiące hemoroidy), siedzą na przeciwległych końcach przylegającego do parku chodnika, położywszy przed sobą wymiętolone czapki.

Pracuję zazwyczaj na skrzyżowaniach. Ze stojących na światłach aut szybko wyłapuję te, które wzbudzają największe zaufanie, podchodzę i patrząc prosto w oczy mojej ofiary, mówię – nie proszę, tylko mówię: „Przepraszam, ale tak się złożyło, że dziś pilnie potrzebuję pieniędzy, niech pan pomoże, jeśli pan może”. Policzyłem: z trzech podejść zwykle udaje się jedno... Potem moi towarzysze wyślą kobiety po wino, a mnie tu trzyma jakiś idiota. Opowiem im, to nie uwierzą.

Co robić? Cicho usiadłem na kamieniu i kątem oka zacząłem go obserwować. Moje oburzenie nie miało granic. Trzeba przyznać, że mundur bardzo pasował temu psychopacie. Był zupełnie nowy: błyszczące sapogi, mieniące się guziki i klamra. Ciekawe, skąd to wytrzasnął.

– Na co się tak patrzysz? – zapytał, zauważywszy mój wzrok.

– Pewnie niedawno na służbie – odezwałem się.

– Nie twoja sprawa! – Nagle się zdenerwował. – Wstawaj, wstawaj, powiedziałem! Siedzi tutaj i miele jeżorem. Wstawaj! Tak! A teraz biegiem marsz! No już!

– Na litość boską – mówię – mam chore serce, bieganie jest dla mnie niewskazane.

– Cisza! Rozkaz: biegiem marsz, wykonać! – krzyknął i uderzył mnie pałką w plecy.

Musiałem biegać.

– Zwiększyć krąg! Tak! Szybciej, jeszcze szybciej! – rozkazywał, a jego pałka od czasu do czasu lądowała na moich plecach i ramionach. Zacząłem się dusić, kaszleć, kichać. – Dobrze – powiedział. – A teraz przejdź do marszu, ręce z tyłu, wykonać!

Teraz chodziłem, co po bieganiu było szczególnie przyjemne. Ale po chwili ponownie rozległ się rozkaz biegiem marsz. I tak chodziłem i biegałem na przemian.

W południe mój oprawca przyciągnął duży kamień do drzwi, rozłożył na nim chusteczkę i usiadł.

— Czas na obiad — powiedział i z zielonej płóciennej torby, w której znajdowała się maska przeciwgazowa, wyjął ogromną kanapkę.

— Czy mogę usiąść? — zapytałem, ciągle biegając.

— Jak chcesz — odparł. — Twoja wola.

Usiadłem na parapecie, w oknie nie było ramy. Byłem śmiertelnie zmęczony. Nie pamiętam, kiedy ostatnio tyle biegałem, chyba nigdy.

— Nawet nie próbuj uciekać — powiedział, wskazując na okno. — I tak cię złapię.

— Nie w głowie mi ucieczka — przyznałem. Rzeczywiście nawet przez myśl mi nie przeszło, żeby gdziekolwiek biec. Tymczasem on, ciamkając apetycznie, zajadał kanapkę.

Ja zaś się odwróciłem i patrzyłem w okno.

— Hej, masz! — krzyknął i rzucił mi kawałek chleba, chyba się najadł.

Nie mogę jeść, dopóki nie zapodam sobie szklanceczki, nie mam śliny, ale tym razem zjadłem, żeby go nie denerwować. Chleb pachniał kiełbasą, a on palił, opierając się o ścianę.

— Nie poczęstuje pan papieroskiem? — zapytałem.

— Od razu widać, żeś zawodowy żebrak. Doigrasz się — skomentował, ale wkrótce rzucił mi niedopałek papierosa, mówiąc: — Masz, pal, pókim dobry.

Nienawidzę, kiedy ludzie obśliniają ustnik papierosa. Ja nigdy nie obśliniam. Paliłem i od czasu do czasu spoglądałem na jego mundur. Widząc zazdrość w moich oczach, zapytał:

— Co, podoba ci się?

— Przepiękny mundur — przyznałem szczerze. Zadowolony z siebie uśmiechnął się i spojrzał na buty.

– Buty się zakurzyły, przez ciebie – powiedział. – Zobacz, czy nie ma tam jakiejś szmaty.

Wśród zwalonych kawałków betonu leżał kawałek chustki, podałem mu ją.

– Co mi podajesz, sam wyczyść, przecież ci się podobają.

Posłuchałem. Nie było wyjścia, to był prawdziwy psychopata. Bolały mnie boki i plecy od uderzeń pałki. Czyściłem buty, wdychając świeży zapach skóry. Nagle przed moimi oczami stanął sen mojej młodości: jestem generałem, nie, marszałkiem, znajduję się na wysokim piedestale, a poniżej w równych rzędach wielotysięczna armia nieruchomo i w milczeniu czeka na moje rozkazy: jeśli zechcę, pošlę ją w prawo, jeśli zechcę – w lewo, jeśli zechcę – skieruję na wroga, jeśli zechcę – podzielę na dwie części i pójdą przeciwko sobie. Zrobię wszystko, co zechcę, wszystko zależy ode mnie, od mojego rozkazu.

Pochłonięty myślami nie zauważyłem, że poleruję jego błyszczące guziki i klamrę. Nagle brutalnie mnie odepchnął:

– Hej, nie jestem fanem tych rzeczy, obudź się!

Od razu zrozumiałem, co miał na myśli, chciałem się usprawiedliwić, ale nie pozwolił mi dojść do głosu.

– Przerwa się skończyła, wstawaj! – Pstryknął palcami. – A teraz biegiem marsz!

Znowu zacząłem biegać po utartym kręgu, co zrobić, nie jest łatwo poradzić sobie z taką bestią w ludzkim ciele. Po trzecim lub czwartym okrążeniu ogarnęło mnie dziwne uczucie. Wybiegnę nieco w przyszłość... a może jednak nie, nie powinienem się spieszyć. Wyraźnie więc poczułem jakiś dziwny zamęt w duszy, który jednak trwał zbyt krótko, aby móc go bliżej określić, a do tego ten idiota krzyczał bez przerwy, nie pozwalając mi się skoncentrować.

– Szybciej, szybciej, wyżej nogi, nie przestawaj!

W końcu padłem wyczerpany na podłogę i resztką tchu wychrypiąłem:

– Rób, co chcesz, ale ja już nie mogę, umieram.

– Nie umrzesz – powiedział. – Odpoczniesz pięć minut i pobiegiesz dalej.

Poprosiłem go o papierosa – nie dał.

– Nie wolno, przeciwwskazane po bieganiu. Nagłe zatrzymywanie się również jest przeciwwskazane. Wstawaj i maszeruj!

Znowu zmuszony byłem chodzić. Ale ten wariat miał rację, oddech się wyrównał. Na zewnątrz zaczęło robić się ciemno. Zerknął na zegarek i z wyraźnym żalem rozkazał:

– Stój! Koniec! Odmaszerować! Dobra, zmywam się. Wszystkiego dobrego. – Odwrócił się i poszedł.

Wszedłem za nim przez okno i gdy tylko zniknął na końcu ulicy, rzuciłem się w stronę parku. Na szczęście moi towarzysze nie wypili całej wieczornej doli wina, opróżniłem butelkę jednym haustem. Patrzyli na mnie zdezorientowani. Odezwałem się:

– Niestety, wylądowałem na policji – wyjaśniłem. Nie powiedziałem nikomu o tym, co się stało, nie wiem dlaczego, ale instynkt podpowiadał mi, że powinienem zachować to dla siebie.

A rano znowu nogi same poniosły mnie do opuszczonego domu. Oczywiście, mogłem pojawić się wcześniej, przed jego przyjściem załatwić swoje sprawy i wyjść. Ale szczerze mówiąc, chciałem go zobaczyć: poprzedniego dnia wykonał już swoją brudną robotę. Pewnie zabrzmi to dziwnie, ale tak było: chciałem zobaczyć mojego oprawcę i nie mogłem się oprzeć temu pragnieniu. Poza tym bardzo mnie ciekawiło, czy ten psychol ponownie przyjdzie, czy może jednak coś mu się pomyliło. Wszedł. W samą porę – nie mam

zegarka, ale patrząc na ulicę i niebo, prawie bezbłędnie określiłam godzinę. Przyszedł i nie wydawał się zaskoczony moim widokiem, chociaż powiedział:

— Znowu tu jesteś, bezdomny psie?

Sam jesteś psem — odpowiedziałem mu w myślach, ale najwyraźniej coś odbiło się na mojej twarzy, gdyż zmarszczył brwi i ostro krzyknął:

— W prawo zwrot! W lewo zwrot! Prawe ramię w przód, marsz. Biegiem marsz!

Do południa biegałem, chodziłem, a nawet czołgałem się, przeklinając swój los. Kiedy pograżasz się we wspomnieniach, łatwiej znosisz udrękę — to już sprawdzone. Przypomniało mi się moje niespełnione młodzieńcze marzenie. Spojrzałem w stronę oprawcy, chciałem zobaczyć jego mundur, żeby odświeżyć pewne szczegóły w mojej pamięci, i nagle wydało mi się, że ja to nie ja, a on... a on to ja. Był to jakiś absurdalny stan umysłu. Wcześniej także mi się to zdarzało — gapiąc się na innych, zastanawiałem się, dlaczego jestem sobą, a nie tym przechodniem, lodziarzem czy policjantem, tak... dlaczego jestem sobą, a nie kimś innym. Co sprawia, że mogę tak powiedzieć. Wtedy to były tylko refleksje, ale kiedy dziś czołgałem się na brzuchu w opuszczonym domu, bardzo wyraźnie czułem, że nie jestem sobą, tylko nim. Wydawało mi się nawet, że to on się czołga, a ja w jego mundurze wydaję rozkazy. Zmęczenie zniknęło jak ręką odjął, choć wcześniej mięśnie trzeszczały i wyły żałośnie, niczym kot, który wpadł w paszczę psa, albo mysz, która znalazła się w kocich zębach.

W południe poczęstował mnie całym papierosem – chyba zrobiło mu się mnie żal. Zauważyłem, że czasami jego ciągły gniew rozświetlały momenty krótkiej życzliwości, po których robił się jeszcze bardziej zły, jakby żałował tej chwili słabości.

Ja paliłem, on jadł. Potem odstąpił mi resztę chleba z dżemem, a sam zapalił papierosa. Uwielbiam dżem figowy.

– Wypiłbym kieliszeczek wina... – wymamrotałem pod nosem.

Usłyszał i uśmiechnął się:

– Wbij sobie do łba, panie pijaku: ani kropli alkoholu podczas mojej warty, inaczej surowo ukarzę. A teraz wychodzę na kilka minut, obiecuję, że nie uciekniesz. Nawet jeśli będę w pobliżu i tak cię złapię.

– Nie ucieknę – powiedziałem. – Gdybym chciał uciec, w ogóle bym nie przyszedł.

– Kto wie, rano człowiek ma inny nastrój, po południu inny, a wieczorem jeszcze inny – zauważył wariat.

– Nie ucieknę – zapewniłem go. – Ale przecież możesz załatwić swoją potrzebę tutaj.

– Tylko tego by brakowało. Nie jesteśmy tacy sami.

Omów nie powiedziałem: „przecież jesteśmy tacy sami” i przez chwilę wydawało mi się, że rozmawiam sam ze sobą. Jednak to nie ja mówiłem – tylko on, przez to miałem wrażenie, że rozmawia sam ze sobą. Ale przecież tak wydawać się mogło tylko jemu... Zaczynałem plątać się we własnych myślach, jednak nie mogłem zatrzymać pracy mózgu. Dobrze, że szybko wrócił. Wygładził mundur i przybrawszy surowy wyraz twarzy, wydał rozkaz:

– Bacność! Biegiem marsz!

W nocy, siedząc pod drzewem i popijając wino, ze zdziwieniem poczułem, że za nim tęsknię.

Chciałem, aby ta noc skończyła się jak najszybciej. Najlepszym sposobem na skrócenie nocy jest sen, tymczasem moi towarzysze byli w nastroju na pogawędkę, a z ulicy ciągle dobiegał hałas samochodów.

Rano obudziłem się przestraszony, myśląc, że zaspałem. Kiedy jednak uważnie rozejrzałem się i popatrzyłem w niebo, uświadomiłem sobie, że na próżno się martwiłem. Obok mnie, oparty się kolanem o mój brzuch, oddychała miarowo jedna z naszych kobiet. Była osikana. Z kieszeni kurtki na piersi wystawał zmięty papieros. Nie chciałem biedaczki budzić tylko po to, żeby zapytać, czy mogę się poczęstować, więc po prostu wziąłem papierosa. Dotknąłem dłonią jej piersi – była niczym plastikowy woreczek wypełniony ciepłą wodą. Otrzeptałem się z trawy i wyszedłem na ulicę. Dozorca, klnąc pod nosem, zamiatał chodnik. Dał mi odpalić, złożąc: „Co za brudasy mieszkają w tym mieście, twoja mać!”. Zmrużyłem oczy ze współczuciem i poszedłem. Jakaż to przyjemność palić i spacerować po opustoszałych ulicach!... Błogostan! Idziesz jak pan tego miasta!

Kiedy przyszedł, siedziałem właśnie na kamieniu, przeglądając uważnie poranną gazetę znaną pod płótem. Już z daleka krzyknął do mnie:

– Hej, przyszedłeś, bezdomny psie!

Nie odpowiedziałem, przywitałem się z nim lekkim skinieniem głowy i czytałem dalej.

– O, ty nawet gazety czytasz? – zdziwił się.

Głupcze, mam prawie pełne wyższe wykształcenie... studiowałem do trzeciego roku, potem rzuciłem, tak naprawdę wyrzucili mnie... coś się wydarzyło i... jednym słowem – niepełne wyższe.

Chciałem to wszystko powiedzieć, ale utknałem na wyrazie „trzeci rok”, słowa uwięzły mi w gardle. Czasami zdarza się, że nagle, w pół słowa świadomość mi się wyłącza – zatrzymuje się na jednym, dwóch, najwyżej trzech wyrażeniach. Patrzył ze zdumieniem, jak moja twarz wykrzywia się konwulsyjnie, a ja odruchowo powtarzam „trzeci rok... rok... aż do trzeciego... roku... do trzeciego...”. Wspomnienie o przeklętym niepełnym wyższym zawsze sprawiało mi ból.

– Zamknij się, skoro nie idzie ci gadanie – poradził.

Łatwo powiedzieć, jakby to zależało ode mnie.

– Wstać! Baczość! – ryknął nagle grzmiącym głosem.

To zabawne, natychmiast wyrwałem się z odrętwienia i zerwałem na równe nogi. Krzyknąłem:

– Tak jest!

I zaczął się bieg.

– Widzisz, ćwiczenia cię leczą, powinienes być mi wdzięczny – powiedział i nagle przechodząc do poważnego tonu, rozkazał:

– Wybuch przed nami!

Spojrzałem na niego zdezorientowany. Oczywiście udawałem, w rzeczywistości doskonale wiedziałem, co robić, chciałem tylko ugrać trochę czasu na złapanie oddechu.

– Co, w wojsku nie byłeś? – zapytał.

– Byłem – odpowiedziałem. – Ale nie znam tej komendy.

– Musisz szybko odwrócić się plecami do eksplozji i paść twarzą do ziemi – wytłumaczył. – Jasne? Jak jasne to... „Wybuch przed nami”!

Natychmiast odwróciłem się plecami do wyimaginowanej eksplozji i padłem na ziemię.

– W porządku – usłyszałem nad głową jego głos. – Ale pięty ci wystają, rozstaw je. I schowaj głowę jak trzeba, jeszcze trochę, jeszcze.

Przycisnął mi podeszwą głowę, mówiąc żartobliwie:
– Lepiej rozdeptać, niż pozwolić, żeby rozerwało
odłankiem. Wstań, spróbujemy jeszcze raz.

Stanąłem na baczność, czekając na nowy rozkaz.

– Eksploz... – zaczął, ale ku swojemu przerażeniu
przerwał nagle w pół słowa, nie mogąc mówić dalej.
Jego twarz i szyja drgały konwulsyjnie, zaczął mecha-
nicznie powtarzać: – Eksplozja... eksplozja... eksploz...
eksplozja...

W końcu zamilkł. Patrzyliśmy na siebie, nawet nie
mrugając. Nagle ogarnęło mnie przekonanie, że
wszystko o nim wiem. Chciałem wyjaśnić i zapytałem:

– Przepraszam, czy pan przypadkiem nie pocho-
dzi ze wsi? – spytałem, chcąc sprawdzić swoje przy-
puszczenia.

– A tobie co do tego, ty wstrętny psie? – syknął. –
Nienawidzisz wieśniaków, co?

– Nie, dlatego, ja sam... co prawda, nie urodziłem
się na wsi, ale moi rodzice pochodzili ze wsi. W końcu
wszyscy jesteśmy stamtąd korzeniami – zacząłem się
usprawiedliwiać, czując, że ogarnęła go wściekłość.

– Nie kłam, wiem, że mnie nienawidzisz, mnie nie
oszukasz, dobrze was znam, ciebie i tobie podobnych.
Nic to, pobędę tu miesiąc, dwa jako strażnik, dorobię
się oficera, i wtedy zobaczymy, kto jest kto... – Ostat-
nie słowa wydawały się skierowane do kogoś innego.

– Pewnie ma pan jakichś krewnych na górze – pró-
bowałem go uspokoić, jednak jak się okazało, bezsku-
tecznie, bo na początku był przerażony, nawet jakoś
się skurczył, a potem strasznie się rozżłościł.

– Bzdury wygadujesz! Wstawać! Baczność! Brzuch
wciągnij, wyżej łeb! – wrzeszczał.

Zamilkł na chwilę, po czym zdjął wiszącą z boku
maskę przeciwgazową i wręczył mi ją ze słowami:

– Sześć sekund! Zrozumiano?

— Przepraszam — powiedziałem — o ile pamiętam, standardem jest osiem sekund.

— Teraz już sześć. — Przygotował stoper. — Uwaga, zaczynamy. Maski włóż!

Do przerwy nie udało mi się założyć w sześć sekund tej cholernej gumowej maski, która wrywała mi włosy, bo po prostu była na mnie za mała. Zdołałem to zrobić dwa razy w ciągu ośmiu sekund, ale go to nie satysfakcjonowało. Guma paliła mi twarz, miałem wrażenie, że słony pot ciurkiem płynie po ogolonej skórze.

— Dobra, dokończymy po przerwie — powiedział mój oprawca, patrząc na zegarek.

Zupełnie wyczerpany usiadłem na obtłupanym kamieniu.

— Wiesz, ta maska gazowa bardzo ci pasuje, jest na twój rozmiar, poważnie ci mówię, tysiąc razy ładniejsza od twojej gęby — zaczął chichotać. — Na twoim miejscu w ogóle bym jej nie ściągał, jedyna szansa, żeby jakaś babka na ciebie spojrzała.

Wlepiłem wzrok w leżącą na moich kolanach maskę i miałem wrażenie, że ona też się ze mnie śmieje. A ten świr już pochłaniał swoją kanapkę — dzisiaj miał z wędzoną kiełbasą. Zapach kiełbasy drażnił nozdrza. Nie podzielił się ze mną. Papierosa też nie zaproponował. Szukałem wśród kamieni jakiegoś niedopałka — strasznie chciało mi się palić. Nie znalazłem. Wygrzebałem za to kawałek lustra. Spojrzałem w nie. Moja twarz przypominała sflaczałego buraka. Wyrzuciłem lustro. Dźwięk zwrócił jego uwagę, rozejrzał się po pokoju i wydał komendę:

— Wstać! Baczość! Co to za bałagan na posterunku, pytam się, w chlewie jest czysiej. To musi być taki posterunek, żeby go zauważali, podziwiali, dali odznakę.

No już, bezpański psie, doprowadź to wszystko do porządku. Pozbieraj te kamienie i ułóż starannie pod ścianą. Tylko staraj się nie kurzyć. No, do roboty.

Nawet gdzieś w głębi duszy ucieszyłem się z takiej zmiany, pozbyłem się maski gazowej. Posprzątałem teren, zebrałem wszystkie kamienie i umieściłem starannie pod ścianą. Długo patrzył na ten stos, po czym niezadowolony powiedział:

— Nie, jakoś nie za bardzo tam wygląda, przenieś to pod przeciwległą ścianę.

Przekłęty esteta — pomyślałem. I tak do wieczora nosiłem kamienie spod jednej ściany pod drugą i z powrotem. Na koniec dnia wypolerowałem mu buty. Chciałem wypolerować też kłamrę, ale mi nie pozwolił.

— Nie — powiedział. — Nie mogę ci powierzyć takiej odznaki.

Cisnęło mi się na usta, żeby zapytać, dlaczego nie, może zjem mu ją, czy co. Myślałem, że doprowadzi mnie do śmierci, miałem dość tego wariata. Mundur też temu idiocie już nie pasował. Czy naprawdę nie ma przed nim ucieczki? — zastanawiałem się. I wtedy zdałem sobie sprawę... Ale wydaje mi się, że znowu uprzedzam fakty...

Krótko mówiąc: dziś rano, gdy szedł korytarzem w stronę pokoju, stałem z zapartym tchem za ścianą.

— Hej, gdzie jesteś, bezpański psie? — zawołał.

Nie odpowiedziałem.

— Nie przyszedłeś? — Wyraźnie zasmucił się i usiadł na kamieniu.

W tym samym momencie mocno uderzyłem go przygotowaną wcześniej deską w głowę.

Z jękiem zwałił się ciężko na podłogę. W jego oczach było zdziwienie, ale nie miałem czasu mu się przyglądać. Szybko rozebrałem się i zdjąwszy z niego mundur, wciągnąłem go na siebie,

a swoje ubranie założyłem na niego, co było niezwykle trudne. Na koniec wcisnąłem mu na głowę swój kapelusz i przyjrzałem mu się – naprawdę wyglądał jak bezański pies.

– Tfu, bezdomny pies! – splunąłem.

Mundur leżał na mnie jak ulał, wygładziłem go, poprawiłem pas, wypolerowałem rękawem kłamię, spodnie wsunąłem głęboko w cholewki butów, wzięłem pałkę i stanąłem przed drzwiami. Zaczął dochodzić do siebie. Kołysząc się, jakimś cudem wstał i spojrzał na mnie.

– No, jak się masz, bezdomny psie? – zapytałem.

Spojrzał oszołomiony najpierw na mój mundur, a potem na swoje brudne, pogniecione ubranie.

– Baczość! W prawo zwrot! Biegiem marsz! – rozkazałem.

Chciał coś powiedzieć, ale poczuł zdecydowane uderzenie pałki na swoim karku, pobiegł bez słowa.

Teraz ja jestem stróżem rozwalonego domu.

Եվ հիմա, ահա, կանգնած եմ այստեղ, այս...

Սակայն չչտապենք, քանի որ իրադարձությունը, կարծում եմ, արժանի է՝ որպեսզի պատմեմ սկզբից ու հանգամանորեն, որքան էլ անհամբեր լինեմ:

Առավոտյան իմ զուգարանը լքված տան մեծ սենյակն է. մի անգամ պատահաբար հայտնաբերեցի բետոնե սալերով ցանկապատված այդ կիսավեր տունը, հավանեցի և այնուհետ սկսեցի ամեն օր հաճախել: Առհասարակ, շուտ վարժվող ու սովորություններիս գերին դարձող խառնվածք ունեմ: Եթե, ասենք, երկու օր, վրա-վրա, նույն սրճարանում խմեմ առավոտվա գինիս, երրորդ օրը ոտքերս իրենք իրենց ինձ քարշ կտան այնտեղ: Օրինակը թեև բնորոշ, սակայն անշուշտ հնացած է. վաղուց արդեն սրճարաններում չեմ խմում, սրճարանային հավելվածարը, ինքներդ եք հասկանում... Սակայն չչեղվեմ, այլապես... Միտքս շատ է անզուսպ ու կամայական, եթե ազատ թողնեմ՝ կարճ ժամանակում այնպիսի հեռուներ կտանի, որ շուտ վերադառնալ չեմ կարողանա: Եվ հետո, ցավեցնող են այդ հեռուները, այնպիսի զգացողություն եմ ունենում, կարծես միտքս ինձ մերկամարմին՝ փշերի վրայով է քարշ տալիս: Սակայն դարձյալ շեղվում եմ, չի կարելի յուրաքանչյուր կոնկրետ դեպքի մասին խոսելիս՝ շոշափել նաև ամբողջը: Ուստի դառնամ վերջին դեպքերին, որոնք ինձ համար, կարելի է ասել, շրջադարձային եղան, որովհետև այժմ, ահա, կանգնած եմ այստեղ, այս... Դարձյալ առաջ ընկա... Եղբայր, միթե չես կարող զսպել քեզ, սա ինչ կամազրկություն է:

Օրեր առաջ էր, ուրեմն, եթե ստույգ՝ չորս օր առաջ, առավոտյան վաղ արթնացա, փորս ցավում էր, ուռել ու ցավում էր. ատամների սակավությունը

սովորաբար առատ գազագոյացման պատճառ է դառնում, եթե, իհարկե, ինչ-որ բան ուտում ես: Արթնացա և դուրս սողոսկեցի թփերի միջից՝ ստիպված հրելով ընկերներիս մարմինները, այո, մարմինները, որովհետև երբ գիշերային գինարբուքից հետո այսպես իրար գլխի թափվածքնաձ են՝ մարմին են, ուրիշ ոչինչ, կուզես հայիոյր, կուզես գրպանները դատարկիր, ոչ կլսեն, ոչ կզգան: Լավ ասացի՝ գրպանները դատարկիր. ախր նրանց գրպանները, եզակի բացառությամբ, միշտ դատարկ են, հատկապես առավոտյան, եթե առհասարակ գրպան մնացել է այդ քրքրված հագուստների վրա: Օրինակ, ինձ համար օգտագործելի էր բաճկոնիս միայն մեկ գրպանը՝ ներքին ձախը, ինչը հուշում է, որ բաճկոնի նախկին տերը ձախիկ է եղել: Ի դեպ, հետաքրքիր է, ո՞նց է հիմա այն բարի մարդը, ի՞նչ է անում, կամ, չկամ... Յավալի է, սակայն բաճկոնները հաճախ իրենց տերերից երկար են ապրում: Ինչու: Դուրս սողոսկեցի, ուրեմն, ստուգեցի շուրջը թափված շշերը, որոնք, ավաղ, դատարկ էին, խոտերի մեջ սիգարետի մի կարգին մնացուկ գտա, մտցրի բերանս ու ելա փողոց: Մնացուկը կարող էի շուտ վառել, բայց ես սիրում եմ սենյակում պազած ծխել, պրոցեսին համընթաց՝ այսպես ասած: Վերջապես հասա ցանկապատին և նոր միայն անցնող մեկից կրակ խնդրեցի: Նա նայեց ճմրթված մնացուկիս, գրպանից հանեց տուփը, բայց չմեկնեց ինձ, ինքը միջից սիգարետ հանեց ու տվեց, ինքն էլ չրթացրեց հրահանը: Հասկանում եմ, ձեռքերս կեղտոտ էին, բայց մարդիկ սովորաբար զուգարանից հետո են լվացվում, այնպես չէ:

Պազել էի կոնքի վրա, ծխում էի: Փորկապ էի, կարմիր գինուց միշտ փորկապ եմ ունենում:

Չեմ սիրում կարմիր գինի, բայց միշտ չէ, որ սիրած խմիչքն է ընկնում ձեռքդ, մեծամասամբ՝ հակառակն է լինում: Ես, օրինակ, ծիրանի օղի եմ սիրում, բայց դա ուրիշ պատմություն է: Այդպես պազաձ ծխում էի ու մտածում կյանքի, մարդկության, աշխարհ մասին: Մտածում էի, թե որքան աննկատ է մարդը սկսում գլորվել, հերիք է թեկուզ մի պատիկ բան զիջես, մի թեթև սայթաքես՝ անկումդ սկսված է, արտաքնապես գուցե դեռ նկատելի չէ, բայց ձնագունդն արդեն գլորվում է: Դե իսկ եթե գլորվեցիր՝ նորից կանգնելը շատ դժվար է: Այդպես, պազաձ, մտածում էի. առհասարակ սիրում եմ մտածել, երևի իմ ամենասիրած զբաղմունքն է: Երբեմն, երբ մի քիչ փող է ընկնում ձեռս, խմիչք եմ վերցնում, ծխելիք և իջնում ձորը, մենակ նստում եմ ծառի տակ, խմում անշտապ, ծխում, մտածում... Իսկ երբ վերադառնում եմ մերոնց մոտ, նրանք այնպիսի կասկածանքով են նայում, կարծես զրկված եմ անձնական կյանքի իրավունքից: Վրդովեցուցիչ է: Սակայն դառնանք այն օրվա դեպքերին: Գործս ավարտել և արդեն պատրաստվում էի վեր քաշել շալվարս, երբ հանկարծ հայտնվեց նա: Ուղղեց համազգեստը, ձեռքն առավ գոտուց կախ ռետինե մահակը և խրոխտ կանգնեց դռների մեջ: Իմ կողմը չէր նայում, ասես չէր նկատում: Որոշ ժամանակ մնացի այդպես կիսանստած-կիսականգնած, վերջապես սթափվեցի ու քաշեցի շալվարս: Մտածեցի՝ սրա հետ զլուխ դնել չարժի, սուսուփուս մոտեցա դռանը, որ դուրս գամ: Իսկ նա մահակը սպառնալի պտտեց ու հրամայեց՝ «Ետ դարձ: Ետ գնա, քեզ եմ ասում, էյ»: Համենայնդեպս ընկրկեցի ու հարցրի. «Բայց ինչու»: «Որովհետև սա պահակակետ է, և ես այստեղ պահակ եմ կարգված», - հպարտ պատասխանեց նա:

«Հավանաբար շփոթել եք,- ասացի,- սա արդեն վաղուց լքված, կիսավեր տուն է, ինչ պահակակետ»։ «Բացատրություններ տալու լիազորված չեմ,- կտրեց նա,- ասացի պահակակետ է և վերջ, ավել-պակաս չխոսես»։ «Համաձայն եմ,- զիջեցի,- պահակակետ է, ուստի թույլ տվեք լքել ձեզ վստահված տարածքը»։ «Ոչ մի դեպքում։ Հրամայված է՝ ոչ ոքի չթողնել»։ «Ներս չթողնել՝ դա հասկանալի է, բայց դուրս...», - համառում էի ես։ Սակայն նա անհողորդ էր. «Չեն ճշտել, ուրեմն՝ ո՛չ ներս, ո՛չ դուրս։ Ես անում եմ այն, ինչ հրամայված է, պարզ է»։ «Պարզ է,- ասացի՝ զգալով, որ համառելն անիմաստ է։- Եվ որքան պետք է մնամ այստեղ»։ «Մինչև պահակության ավարտը», - չոր պատասխանեց նա։ «Իսկ դա, ներեցեք, որքան է, եթե գաղտնիք չէ»։ «Որքան սահմանված է։ Եվ չփորձես ինձ համոզել կամ կաշառել, կպատժեմ, ձայնդ կտրած նստիր»։ Այ քեզ փորձանք՝ մտածեցի, աստված գիտի որքան՝ ծարավ նստել այս խելագարի կողքին... Իսկ ընկերներս երևի արդեն արթնացել, դուրս են եկել գործի, «սանրում են» մերձակա փողոցները, իսկ այն երկուսը, որ դժվարանում են քայլել,- մեկը սաստիկ հողացավ ունի, մյուսը արնածոր հեմորոյ,- զբաղեցրել են իրենց անփոփոխ տեղերը՝ զբոսայգուն հարող մայթի երկու ծայրերում, ցանկապատի տակ, ճմռթված գլխարկներն առջևները դրած։ Ես սովորաբար խաչմերուկներում եմ աշխատում.

ընտրում եմ լուսացույցի տակ կանգնած մեքենաներից առավել հավատ ներշնչողին, մոտենում և նայելով «գոհիս» ուղիղ աչքերին՝ ասում, չեմ խնդրում, չէ, պարզապես ասում եմ. «Կներեք, այնպես ստացվեց, որ այսօր փողի խիստ կարիք ունեմ, օգնեք, եթե ի վիճակի եք»: Հաշվել եմ՝ երեք-չորս մոտեցումներից մեկն արդյունավետ է լինում: Հետո կանանց կողարկեն գինու՝ մտածեցի, իսկ ես այստեղ կալանված եմ մի ինչ-որ ապուշի կողմից: Պատմեմ՝ չեմ հավատա: Ճար չկար, լուռ նստեցի քարին: Աչքի պոչով նայում էի նրան: Վրդովմունքս անսահման էր: Սակայն ստիպված էի խոստովանել, որ համազգեստը սազում է այդ խենթին: Բոլորովին նոր համազգեստ էր՝ ճոճռան սապոգներ, շողշողացող ճարմանդներ, կոճակներ... Տեսնես որտեղից է ձեռ գցել: «Ինչ ես էդպես նայում», - հարցրեց՝ որսալով հայացքս: «Երևի նոր եք մտել ծառայության, այր՛», - ասացի: «Քեզ ի՞նչ, - կտրուկ բորբոքվեց նա: - Վեր կաց, վեր կաց ասում եմ: Նստել է էստեղ ու ավել-պակաս դուս է տալիս: Վեր: Իսկ հիմա՝ վազքով մարշ: Դե՛...»: «Աստծու սիրուն, - ասացի, - ես հիվանդ սիրտ ունեմ, վազելն ինձ հակացուցված է»: «Ձայնդ կտրիր: Հրամայված է՝ վազքով, ուրեմն կատարիր», - գոռաց խելագարն ու մահակով հարվածեց մեջքիս: Ճարահատյալ վազեցի: «Շրջանը լայնացրու: Այդպես: Ավելի արագ, արագ», - հրամայում էր նա ու ժամանակ առ ժամանակ խփում ուսերիս, մեջքիս: Սկսեցի շնչակտուր լինել, հազալ, փռշտալ: «Լավ, - ասաց, - հիմա քայլիր, ձեռքերդ դիր մեջքիդ ու քայլիր»: Քայլեցի: Վազելուց հետո քայլելը նույնիսկ հաճելի էր: Բայց քիչ անց նորից վազքի հրաման հնչեց: Այդպես, մերթ քայլում էի, մերթ վազում:

Կեսօրին հոգեառու մի մեծ քար բերեց դռան մոտ, թաշկինակը փռեց ու նստեց: «Ճաշի ժամն է», - ասաց և կանաչ քաթանե պայուսակից, ուր նաև հակագազն էր, մի մեծ բուտերբրոդ հանեց: «Կարո՞ղ եմ նստել», - հարցրի, որովհետև շարունակում էի վազել: «Ո՞նց կուզես, - ասաց, - կամքը քոնն է»: Նստեցի շրջանակից զուրկ պատուհանի գոգին: Սարսափելի հոգնել էի: Չէի կարողանում հիշել, թե վերջին անգամ երբ էի այդքան վազել, հավանորեն՝ երբեք: «Հանկարծ չփորձես փախչել, - պատուհանն ակնարկելով զգուշացրեց նա, - մեկ է՝ կբռնեմ»: «Իսկի մտքովս չի էլ անցնում, - ասացի. իսկապես չէր անցնում: Նա ախորժակով չփչփացնում էր: Իսկ ես շրջվել ու դուրս էի նայում: «Է՛յ, բռնի՛», - կանչեց ու նետեց հացի կտորը. երևի կշտացել էր: Ես մինչև գոնե մի բաժակ չխմեմ՝ ուտել չեմ կարող, բերանս թուր չի գոյացնում, բայց կերա, որպեսզի չբարկացնեմ նրան: Հացից երշիկի հոտ էր գալիս: Ինքը, պատին հենված, ծխում էր: «Սիգարետ չե՞ք հյուրասիրի», - խնդրեցի: «Անմիջապես երևում է, որ պրոֆեսիոնալ մուրացկան ես, - նկատեց: Քիչ հետո զգեց ծխացող մնացուկը. - Ա՛՛ն, ծխիր, քանի բարի եմ»: Տանել չեմ կարողանում, երբ այդպես թքոտում են սիգարետի պոչը, անձամբ ես, օրինակ, բացարձակապես չոր եմ ծխում: Ծխում էի ու մեկ-մեկ նայում նրա համազգեստին: «Ի՞նչ է, դուրդ գալի՞ն է», - հարցրեց: «Հրաշալի համազգեստ է», - խոստովանեցի ես: Ինքնագոհ ժպտաց, ապա նայեց սապոզներին:

«Սապոգներս փոշոտվեցին քո պատճառով,-
ասաց,- Փալաս-փուլուս չկա՛մ էդտեղ»։ Բետոնի
կտորտանքի տակից մի ճղրտած թաշկինակ գտա
ու տվի նրան։ Չվերցրեց. «Ինչու՞ ես տալիս, մաքրիր,
դուրդ գալիս են սապոգներս, չէ՞»։ Ենթարկվեցի,
ի՛նչ կարող էի անել, կատարյալ գժի հետ գործ
ունեի։ Մաքրում էի սապոգները, քիթս ականա
որսում էր թարմ կաշվի հոտը։ Պատանեկությանս
երազանքը հանկարծ հստակորեն պատկերվեց
մտապատկերիս մեջ՝ ես գեներալ եմ, չէ, մարշալ
եմ, կանգնած եմ բարձր հարթակին, ցածում՝
բազմահազարանոց բանակն է՝ ձիգ շարքերով,
անշարժ, անձպուտ, սպասում է հրամանիս,
կուզեմ՝ աջ կուղարկեմ, կուզեմ՝ ձախ, կուզեմ՝
թշնամու դեմ, կուզեմ՝ երկու մասի կբաժանեմ ու
իրար դեմ կհանեմ, ինչ ուզեմ՝ կանեն, ամեն բան
միայն ինձնից է կախված, իմ հրամանից։ Մտքերով
տարված՝ չէի նկատել, որ շոյում եմ նրա շողշողուն
ճարմանդը, կոճակները։ Նա հանկարծ կոպտորեն
հրեց, ասելով՝ «Է, է, ուշքի արի, ես այդպիսի բաներ
չեմ սիրում»։ Անմիջապես կռահեցի, թե ինչ անցավ
խելագարի մտքով, ուզում էի բացատրել, բայց
չթողեց ձայն հանեմ, «Ընդմիջումն ավարտվեց,
ոտքի՛, վազքով մարշ», - գոռաց։ Վազեցի արդեն
սովոր շրջանով, ի՛նչ անեի, անասունի հետ հո
գլուխ չէի՞ դնելու։ Երրորդ, թե չորրորդ շրջանն էի
վազում՝ հանկարծ զգացի, թե ինչպես է գոյանում
իմ մեջ այդ արտառոց զգացողությունը։ Առաջ
անցնելով ասեմ... Բայց ոչ, չարժե առաջ անցնել։
Ուրեմն, ինչպես ասացի, պարզորոշ զգացի այդ
արտառոց հոգեկան շփոթը, որը, սակայն, կարճ
տևեց, որպեսզի կարողանայի հասկանալ, և հետո
այդ ապուշն անդադար գոռում էր, չէր թողնում
կենտրոնանամ.

«Արագ, ավելի արագ, ոտքերդ բարձր, կանգ չառնել...»: Ի վերջո անուժ փոփոցի հատակին և ասացի՝ «Ինչ կուզեք, արեք, այլևս չեմ կարող, մեռնում եմ»: «Չես մեռնի,- ասաց,- հինգ թուփ հանգիստ և՛ նորից վազք»: Սիգարետ ուզեցի, չտվեց. «Չի կարելի,- ասաց:- Կտրուկ դադարն էլ է հակացուցված, վեր կաց, քայլիր»: Քայլեցի ճարահատյալ: Բայց իրավացի էր խենթը, այդպես շունչս ավելի հեշտ տեղը եկավ: Արդեն մթնում էր: Նա նայեց ժամացույցին և նկատելի ափսոսանքով հրամայեց. «Կանգ ա՛ռ: Վերջ: Ես գնացի, մնաս բարով», - ապա շրջվեց ու հեռացավ: Պատուհանից հետևեցի, մինչև չքվեց փողոցի ծայրում, և ինձ անմիջապես գցեցի զբոսայգի: Լավ էր, ընկերներս երեկոյան բաժին գինու վերջը չէին տվել դեռ. մի շնչով դատարկեցի շշում մնացածը: Տարակուսած նայում էին: Ասացի՝ «Փորձանք պատահեց, ոստիկանություն ընկա»: Ոչ մեկին չպատմեցի եղելությունը, չգիտես ինչու՝ համոզվածություն կար մեջս, որ չպետք է պատմեմ:

Իսկ առավոտյան, ոտքերս իրենք տարան ինձ դեպի լքված տունը: Իհարկե, կարող էի ավելի վաղ գնալ և մինչև նրա գալը գործս ավարտել-հեռանալ: Սակայն, անկեղծ ասած, ուզում էի տեսնել նրան. համատեղ անկացրած նախորդ օրն արել էր իր սև գործը: Այո, գուցե տարօրինակ էր, բայց այդպես էր՝ ուզում էի տեսնել հոգեառիս, անկարող էի հակառակվել ցանկությանս: Ինձ նաև շատ հետաքրքրում էր՝ գալու՞ է գիժը, թե՞ այնուամենայնիվ ինչ-որ բան շփոթել էր: Եկավ: Ճիշտ ժամին:

Ես ժամացույց չունեմ, սակայն փողոցին ու երկնքին նայելով անսխալ որոշում եմ ժամանակը: Եկավ ու կարծես չգարմացավ ինձ տեսնելով, թեև ասաց՝ «Էլի՛ այստեղ ես, անտեր շուն»: «Ինքդ ես շունը», - մտովի պատասխանեցի ես, և դա երևի տպվեց դեմքիս, որովհետև կտրուկ խոժոռվեց ու գոռաց՝ «Աջ դարձ: Ձախ դարձ: Աջ ուսն առաջ՝ քայլով մարշ: Վազքով մարշ»:

Մինչև կեսօր վազում էի, քայլում, նույնիսկ փորսող տվի՝ անհիծելով բախտս: Փորսող տալիս անցյալս էի հիշում. երբ խրվում ես հիշողությունների մեջ՝ չարչարանքները հեշտ ես տանում: Հիշեցի պատանեկությանս երազանքները, ուրիշ բաներ, և հենց նայեցի նրան, - ուզում էի տեսնել համազգեստը՝ հիշողությանս որոշ մանրամասներ ճշգրտելու համար, - հոգեկան այն արտառոց շփոթը կրկնվեց, այս անգամ՝ շատ ավելի հստակ, ինձ հանկարծ պարզորոշ թվաց, թե ես ես չեմ, այլ՝ ինքը, իսկ ինքը ինքը չէ, այլ՝ ես: Նախկինում պատահել է, որ ուրիշներին նայելիս հանկարծ մտածել եմ, թե ինչու՞ եմ ես՝ ես, այլ ոչ այն անցորդը, պաղպաղակ վաճառողը կամ ոստիկանը, այո, ինչու՞ եմ ես ես, այլ ոչ մեկ ուրիշը, ի՞նչն է, որ ինձ համոզում է ասել՝ ես ես եմ: Բայց դրանք միայն մտորումներ էին, իսկ, ահա, լքված տանը փորսող տալիս շատ հստակ զգացի՝ ես ես չեմ, այլ նա, ինձ նույնիսկ թվաց, թե այդ նա է փորսող տալիս, իսկ ես, համազգեստ հագած, հրամաններ եմ արձակում: Եվ հոգնաճությունն էլ կարծես չէի զգում, թեև քիչ առաջ մկաններս ցավագին տնքում էին, ինչպես շան երախն ընկած կատու կամ կատվի երախն ընկած մուկ:

Կեսօրին մի ամբողջ սիգարետ հյուրասիրեց՝ երևի խղճաց. նկատել էի՝ նրա երկարատև բարկությունը դեպքից դեպք կարող էր փոխվել կարճատև խղճահարության, բայց հետո ավելի էր կատաղում, ասես փոշմանած՝ որ թուլություն է ցուցաբերել: Ես ծխում էի, ինքն ուտում: Հետո ինձ տվեց հաց-կարագ-ջեմի մնացորդը, իսկ ինքը սիգարետ դրեց բերանը: Թզի ջեմ էր, իմ սիրածը: Ինքս ինձ ցածրաձայն ասացի. «Էհ, մի բաժակ գինի լինէր...»: Լսեց: Քմծիծաղեց: «Ականջիդ օղ արա, հարբեցող,- ասաց,- իմ ծառայության ժամանակ ոչ մի կաթիլ ալկոհոլ, այլապես խիստ կպատժեմ: Իսկ հիմա մի երկու րոպեով դուրս եմ գալիս, չփորձես փախչել, մոտերքում եմ, կբռնեմ»: Ասացի՝ «Փախչող լինեի՝ չէի գա»: «Մարդուս տրամադրությունը առավոտյան ուրիշ է, կեսօրից հետո՝ ուրիշ, իսկ գիշերով՝ ավելի ուրիշ», - նկատեց գիժը: «Չեմ փախչի,- վստահեցրի:- Բայց ձեր ուզածը այստեղ էլ կարող եք անել»: «Էդ էր պակաս,- ասաց,- ես ու դու հո մեկ չե՞նք»: Քիչ մնաց ասեի՝ մեկ ենք, որովհետև այդ պահին սկսել էր թվալ, թե ինքս ինձ հետ եմ խոսում: Սակայն խոսողը ես չէի, նա էր, ուստի ինչ է ստացվում՝ ինձ թվաց, թե նա է ինքն իր հետ խոսում... Բայց դա կարող էր թվալ միայն իրեն... Խճճվում էի, սակայն զսպել մտքիս ընթացքը չէի կարողանում: Լավ է՝ շուտ վերադարձավ. ուղղեց կիտելը և խրոխտ կեցվածք ընդունած՝ հրամայեց. «Զգաստ: Վազքով մարշ»:

Տարօրինակ էր, սակայն գիշերով, երբ ծառի տակ նստած գինի էի խմում, հանկարծ հայտնաբերեցի, որ կարոտում եմ նրան:

Ուզեցի գիշերն արագ անցնի: Իհարկե, գիշերը կարճելու լավագույն միջոցը քնելն էր, բայց ընկերներս շատախոսելու էին տրամադրված, երթևեկության աղմուկը փողոցի կողմից նույնպես չէր դադարում:

Առավոտյան վախեցած արթնացա, կարծեցի՝ քնով եմ անցել, բայց երբ ուշադիր նայեցի չորս կողմս, ապա երկնքին, տեսա, որ անհանգստությանս զուր է: Մեր կանանցից մեկն անխռով խոմփացնում էր՝ ծունկը փորիս հենած: Միզել էր տակը: Կրծքագրպանից մի ճմռթված սիգարետ էր ցցվել. չէի ուզում խանգարել խեղճի քունը հենց միայն թույլտվություն հարցնելու համար, պարզապես վերցրի: Ձեռքս դիպավ կրծքին, դա նույնն էր, թե դիպչեր ցելոֆանե տոպրակի, որի մեջ մի քիչ գուլ ջուր կա: Թափ տվի վրայիցս խոտ-ծղոտը, դուրս եկա փողոց: Հավաքարարը քթի տակ հայիոյելով էր ավլում մայթը: Թույլ տվեց, որ վառեմ սիգարետս իր սիգարետի կրակից՝ շարունակելով հայիոյել՝ «էս ինչ կեղտոտ ժողովուրդ ա ապրում էս քաղաքում, ես սրանց տիրու...»: Կարեկցանքով կկոցեցի աչքերս ու հեռացա: Ծխելով քայլել ամայի փողոցներով՝ ինչպիսի՞ հաճույք է, ասես քաղաքի տերը լինես:

Երբ նա եկավ, ես լուրջ տեսքով քարին նստած՝ նախորդ օրվա թերթն էի աչքի անցկացնում, որ ցանկապատի մոտ գտա: Դեռ հեռվից գոռաց. «Է՛յ, անտեր շուն, եկել ես»: Ձայն չհանեցի, գլխի թերև շարժումով բարևեցի ու շարունակեցի կարդալ: «Թերթ էլ է կարդում, սրան տեսեք», - զարմացավ նա: Հիմարի մեկը: Ես բարձրագույն կրթություն ունեմ, համարյա... մինչև երրորդ կուրս, հետո հեռացա, այսինքն՝ հեռացրին, մի դեպք պատահեց ու... Մի խոսքով, թերի բարձրագույն:

Ուզում էի ասել այս մասին, բայց «երրորդ կուրս»-ի վրա հանկարծ սևեռվեցի-մնացի: Այդպես լինում է երբեմն՝ խոսքիս կեսից գիտակցությունս հանկարծ արգելակում-մնում է: Նա ապշած նայում էր, թե ոնց եմ ջղաձգվելով կրկնում՝ «երրորդ կուրս... մինչև երրորդ կու... կու-կու-կու...»: Անիծյալ թերի բարձրագույնի հիշողությունները միշտ ցավ են պատճառում: «Չես կարողանում առաջ գնալ, լռիր», - խորհուրդ տվեց: Հեշտ է ասել, կարծես ինձնից է կախված: «Ոտքի՛, զգանա», - հուժկու գոռաց նա: Հետաքրքիր էր՝ անմիջապես ազատվեցի սևեռումից և ոտքի կանգնելով ասացի՝ լսում եմ: Ու սկսվեց վագրը: «Տեսնում ես, վարժությունները բուժիչ են քեզ համար, - նկատեց խելառը, ապա կտրուկ լրջացավ ու հրամայեց.- Պայթյուն առջևից»: Տարակուսած նայեցի. խորամանկում էի, իրականում լավ էլ գիտեի, թե ինչ պիտի անեմ, պարզապես ժամանակ էի շահում, որ շունչ առնեմ: «Ինչ է, բանակում չե՞ս ծառայել», - հարցրեց: «Ծառայել եմ, - պատասխանեցի, - բայց այդ հրամանը ծանոթ չէ»: «Ուրեմն այսպես, պիտի անհապաղ շրջվես թիկունքով դեպի պայթյունը և քիթբերնի վրա քեզ գցես գետնին, - բացատրեց նա: - Հասկացմիր: Դե որ հասկացար... Պայթյուն առջևից»: Անմիջապես շրջվեցի թիկունքով դեպի երևակայական պայթյունը և փռվեցի գետնին: «Վատ չէ, - գլխավերևումս լսվեց նրա ձայնը: - Բայց կրունկներիդ ցցված են, իջացրու: Գլուխդ լավ սեղմիր գետնին, էլի՛, էլի՛:

-Նա ներբանով սեղմեց գլուխս՝ կատակելով.-
Լավ է՝ ես սեղմեմ, քան բեկորները խփեն-տանեն:
Վեր կաց, մեկ էլ փորձենք»: Զգաստ կանգնած էի՝
սպասելով նոր հրամանի: «Պայթ...», - սկսեց նա և,
ó զարմանք, սևեռվեց-մնաց: Պարանոցն ու դեմքը
ջղածգելով կրկնում էր՝ «Պայթ... պայթ... պայթ...»:
Վերջապես լռեց: Անթարթ նայում էինք միմյանց:
Հանկարծ ինձ սկսեց թվալ, թե ամեն ինչ գիտեմ
նրա մասին: Ուզում էի ճշտել և հարցրի՝ «Ներող
եղեք, ուզում եմ հարցնել՝ պատահաբար հո գյուղից
չե՞ք»: «Քեզ ինչ, քոսոտ շուն, - ֆշշացրեց: - Ատում
ես գյուղից եկածներին, համ»: «Ոչ, ինչու՞, ինքս
էլ... Ճիշտ է, գյուղում չեմ ծնվել, բայց ծնողներս
գյուղից են, ի վերջո՝ բոլորիս արմատներն էլ
գյուղից են», - արդարացա՝ զգալով, որ կատաղում
է: «Ինձ չես խաբի, ես գիտեմ, ատում ես, քեզ
նմաններին լավ եմ ճանաչում: Ոչինչ, ոչինչ, մի
երկու ամիս էստեղ պահակություն կանեմ, հետո
սպայի կոչում կստանամ, էն ժամանակ կտեսնենք
ով ով է», - վերջին բառերը կարծես մի ուրիշի
էին ուղղված: «Երևի լավ բարեկամներ ունեք
վերևներում», - փորձեցի սիրաշահել, բայց ինչպես
պարզվեց՝ անհաջող, որովհետև նա սկզբում
վախեցավ, նույնիսկ կծկվեց մի տեսակ, հետո
սաստիկ կատաղեց ու գոռաց. «Ավել-պակաս
դուս ես տալի: Ոտքի՛, զգաստ: Փորդ ներս քաշի,
մոռութդ բարձրացրու՛»: Մի պահ մտածեց, ապա
հանեց կողքից կախած հակագազն ու տվեց՝ «Վեց
վայրկյան, հասկացա՛ր»:

«Ներեցեք,- բողոքեցի,- նորմատիվը, որքան գիտեմ, ութ վայրկյան է»: «Էր, հիմա վեց է:- Նա պատրաստ պահեց վայրկյանաչափը:- Ուշադիր, սկսում ենք: Հագնել հակագազը»: Մինչև ընդմիջում ինձ այդպես էլ չհաջողվեց վեց վայրկյանում հագնել անիծյալ ռետինե թաղանթը, որ քաշում-պոկում էր մազերս, երկու անգամ հաջողացրի ութ վայրկյանում հագնել, բայց դա նրան չբավարարեց: Ռետինը դաղել էր դեմքս, աղի քրտինքն ասես մերկ մաշկիս վրայով էր հոսում: «Լավ, ընդմիջումից հետո կշարունակենք», - ասաց հոգեառս՝ ժամացույցին նայելով: Ուժասպառ նստեցի չեչոտ քարին: «Լսիր, գիտես, հակագազը քեզ շատ էլ սազում է, ոնց որ՝ քո վրայով կարած, լուրջ եմ ասում, դեմքիցդ հազար անգամ սիրուն է,- հռիռաց նա:- Քո տեղը լինեմ՝ հակագազով կապրեմ, միակ շանսդ է՝ կանանց ուշադրությանն արժանանալու»: Աչքս ընկավ ծնկներիս հանգրվանած հակագազին ու թվաց, թե նա էլ է հռիռում վրաս: Իսկ գիժն արդեն լափում էր իր բուտերբրոդը, որն այս անգամ ապխտած երշիկով էր: Երշիկի բույրը հասնում էր քթիս: Ինձ չառաջարկեց: Ոչ էլ սիգարետ տվեց: Քարերի արանքներում մնացուկ փնտրեցի, չգտա, փոխարենը մի հայելու բեկոր ընկավ աչքովս, վերցրի, նայեցի... Դեմքս ասես եփած բազուկ լինեք, ճմրթած բազուկ: Շարտեցի հայելին: Նա շրջվեց ձայնի կողմը, ապա հայացքը սենյակում պտտելով՝ հրամայեց. «Զգաստ: Ոտքի: Էս ինչ է պահակակետի վիճակը, քեզ եմ հարցնում, խոզանոցը սրանից մաքուր է:

Սա էնպիսի մի պահակակետ պետք է լինի, որ նկատեն, զարմանան, պարզևատրեն:

Շու՛տ արա, անտեր շու՛ն, կարգի բեր տարածքը:
Էն քարերն էլ հավաքի, սիրուն շարի պատի
տակ, դավայ, անցի գործի, մենակ թե փոշի
չբարձրացնես»: Ինչ-որ տեղ նույնիսկ ուրախ
էի նման շրջադարձի համար՝ հակազազից
պրծա: Մաքրեցի տարածքը, քարերը հավաքեցի,
խնամքով կիտեցի պատի տակ, բայց նա նայեց,
նայեց ու դժգոհ նկատեց. «Չէ, այդտեղ չի նայվում,
հակառակ պատի տակ տեղափոխիր»: Անիծյալ
գեղագետ: Այդպես, մինչև օրվա վերջը, քարերը
տեղափոխում էի մի պատից մյուսի տակ և
հակառակը: Օրվա ավարտին փայլեցրի նրա
փոշոտ սապոգները, ուզում էի նաև ճարմանդը
փայլեցնել, բայց չթողեց. «Չէ,- ասաց,- գոտին քեզ
վստահել չեմ կարող»: Մի հարցնող լինե՞ր՝ ինչո՞ւ
չես կարող, կուտե՞մ: Արդեն մահու չափ հոգնել,
զզվել էի այդ խենթից, և համազգեստն էլ ամենևին
չէր սազում ապուշին: Մի՞թե սրանից պրծում չունեմ՝
մտածում էի: Ու հենց այդտեղ էր, որ գլխի ընկա
վերջապես... Բայց նորից առաջ եմ ընկնում...

Մի խոսքով, այսօր առավոտյան, երբ նա միջ-
անցքով գալիս էր դեպի սենյակ, ես, շունչս պահած,
թաքնվել էի պատի ետևում: «Էյ, անտեր շուն, ու՞ր
ես», - կանչեց: Ձայն չհանեցի: «Չլինի՞ չես եկել», - մի
տեսակ կարծես տխրեց նա ու նստեց քարին: Նույն
պահին թափով գլխին իջեցրի ձեռքիս պատրաստ
պահած տախտակը:

Ծանր տնքաց ու փլվեց գետնին: Պաղած
աչքերում զարմանք կար: Բայց նրանով հրճվելու
ժամանակ չունեի. արագ հանեցի հագուստս,
հանեցի նաև նրա համազգեստը և հագա,

իսկ իմ հագուստը նրան հագցրի, վերջապես գլխարկս էլ դրեցի գլխին ու նայեցի՝ իսկը անտեր շուն: Այդպես էլ ասացի՝ «Թու՛, անտեր շուն»: Համազգեստը ճիշտ վրայովս էր՝ ուղղեցի-հարթեցրի գոտուս տակ, ճարմանդը թևքով փայլեցրի, տաբատի փողքերն ավելի խոր մտցրի սապոզների մեջ, վերցրի մահակն ու կանգնեցի դռան առաջ: Նա սկսեց ուշքի գալ: Ճոճվելով մի կերպ կանգնեց ու աչքերը չռեց վրաս: Ասացի՝ «Հը, անտեր շուն, ո՞նց ես»: Ապուշացած՝ մերթ համազգեստիս էր նայում, մերթ իր հագի կեղտոտ, ճմռված ցնցոտիներին: «Զգանա՛: Ա՛ջ դարձ: Վազքով մարշ», - հրամայեցի: Փորձեց հակաճառել, բայց մահակն անհապաղ իջեցրի վզին. սուսուփուս վազեց:

Հիմա ես եմ կիսավեր տան պահակը: